Հանդիպմանը Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ Երուսաղեմ կապարած հովվապետական իր այցերին, Հայ Եկեղեցու միջկրոնական հարաբերություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 17-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սերգեյ Մարտինովին՝ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Ծավարշ Քոչարյանի եւ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ երկու երկրների համագործակցությունը տարբեր ոլորտներում բարձր մակարդակի վրա է գտնվում, ինչին նպաստում են նաեւ պետական մակարդակով փոխայցելությունները: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ երկու ժողովուրդների միջեւ ձեւավորված բարեկամական հարաբերություններն ապագայում առավել կզարգանան ու կսերտանան:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն ի դեմս նախարարի իր շնորհակալությունը հայտնեց Բելառուսի իշխանություններին բելառուսահայ համայնքի հանդեպ դրսեւորվող ջերմ վերաբերմունքի եւ հոգատարության համար:

Բելառուսի արտաքին գործերի նախարար Սերգեյ Մարտինովն իր հերթին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ընդունելության համար: Եւս մեկ անգամ հաստատելով երկու երկրների միջեւ սերտ համագործակցության եւ ջերմ հարաբերությունների առկայությունը՝ նախարարն ընդգծեց, որ երկու ժողովուրդները կրողն են հեռավոր անցյալից եկող միեւնույն արժեքների:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությանը, ինչպես նաեւ քննարկվեց Մինսկում կառուցվելիք հայկական եկեղեցու համար անհրաժեշտ հողատարածք հատկացնելու հարցը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ